ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2024թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 194-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի քաղաքապետի 2020 թվականի փետրվարի 11-ի «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» N 194-Ա որոշման 1-ին կետում «հինգ տարի» բառերը փոխարինել «մինչև 2030 թվականի օգոստոսի 1-ը» բառերով:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2020 թվականի մայիսի 12-ին կնքված հ.463 գույքի անհատույց օգտագործման պայմանագրում սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրի կնքման գործընթացը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 194-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևանի քաղաքապետի 2020 թվականի փետրվարի 11-ի «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» հ. 194-Ա որոշման առաջին կետում «հինգ տարի» բառերը փոխարինել «մինչև 2030 թվականի օգոստոսի 1-ը» բառերով:

Մարգարյան փողոցի հ.35 հասցեում գտնվող անշարժ գույքը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.26012016-01-0117 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի փետրվարի 11-ի հ.194-Ա որոշման համաձայն՝ Մարգարյան փողոցի հ.35 հասցեում գտնվող անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով, հինգ տարի ժամկետով տրամադրվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ին, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.06072020-01-0005 վկայական):

Կազմակերպությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելման և (կամ) կյանքի դժվարին իրավիճակից դուրս բերելու նպատակով սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական և սոցիալ-իրավական բնույթի սոցիալական ծառայություններ է մատուցում 2-18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին:

Ելնելով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունից և անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ նախապատրաստվել է «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի փետրվարի 11-ի N 194-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ